ոչ վատեալ և խոշորացեալ, զովեալ յելս ճանապարհի, անսղալ ընթացալ. որպէս էիր ի մուտն՝ նոյն ես և յելս, ի չարեաց և ոչ ի բարեաց։

Ընդ ուխտս անցանելով՝ ոչ խոնաւացար, ընդ տիղմն՝ և ոչ աղտեղացար, ընդ լպրծուտս՝ և ոչ սահեցար, ընդ դժուարս՝ և ոչ գթեցեր, ընդ փուշս՝ և ոչ խոցեցար։

Անդիզ ի զազանացս՝ և անխած ի թիւնաւորացս. անբմբռնելի ի յաղբիւրս, անպաղ ի պաղէս և անկէզ ի հրոյս, անտապ յարևէս և անհայեաց ի հայողէն, անկոխ ի կոխողէն՝ և անխայթ ի թագաւորական իժէն, անապական եռանի մասամբ. մտաւք մարմնով և ոգւով։ Ընդ ամենայն հասակս չբռնեալ. ոչ ի հեշտալեացն հեշտացար՝ և ոչ ի զարշելեացն զարշեցար, և ոչ ի դարն դլորեցար՝ և ոչ ի դիւրն դադարեցար. այլ ընդ ամենայնն անսայթաք ճեմեցար որպէս զՄէրն իմ և զԱստուածն Յիսուս հասեր ի նաւ ահանդիստ։

Ալեկոծեալ խռովեալ և ոչ ընկղմեալ, եհաս ժամանակ դարձի, նրբիրեցար, մենամարտեցար, ղընթացն կատարեցեր, դիմեցեր ի պըսակն, ի փառն և ի պատիւ։ ա արձակ[թղ. 19 ա Յցեր ի կապանաց, դարձար յորմէ ստեղծար։

ա. Ձեռ. «պատիվն».